ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թիֆլիսի կոնսիստորիան հետևեալ շրջաբերականն է ուղարկել քաղաքիս բոլոր հայ դպրոցների հոգաբարձութիւններին, ուսուցիչներին, աւագ ուսուցիչներին և աւագ վարժուհիներին.

«Ազգիս Սրբազնագոյն Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրէնութեան և վիճակային կոնսիստորիայի ամսիս 8-ի № 4685 հրամանի համաձայն, խնդրվում է մեծապատուութիւնիցդ ձեր խնամքին յանձնված դպրոցի ուսուցիչ և ուսուցչուհիների, աշակերտ և աշակերտուհիների հետ շնորհ բերել ամսիս 13-ին, շաբաթ օր, առաւօտեան ժամը 10-ին, Վանքի աւագ եկեղեցին, ներկայ լինելու Թարգմանչաց՝ ս. Սահակայ և Մեսրովբայ և հայ գրականութեան ու տպագրութեան հանգուցեալ վաստակաւորների համար կատարվող հոգեհանգստեան, իսկ հետևեալ օրը, կիրակի, նոյնպէս ժամը 10-ին, նոյն եկեղեցում Հայրապետական մաղթանքին։ Յօբելեանական հանդէսը կատարելու համար արդէն ուղարկված է ձեզ շրջաբերականով ծրագրի մի օրինակ ի հրահանգութիւն»։

Համանման շրջաբերականներ ուղարկված են և Թիֆլիսի թեմի բոլոր հայ ծխ. դպրոցների վարչութիւններին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Երևան քաղաքի ազգաբնակութեան կողմից Պետական Դումայի համար պատուիրակներ են ընտրված քաղաքագլուխ Յովհ. Մելիք-Աղամալեան և Հայկ Յովհաննիսեան։

—

Մենք հաղորդեցինք, որ հոկտ. 2-ին Շուշու քաղաքի ազգաբնակութեան պատուիրակ ընտրվեց Հ. Առաքելեան։ Այժմ ստացված պաշտօնական գրութիւնից երևում է, որ Հ. Առաքելեան ընտրված է պատուիրակ ոչ միայն Շուշու այլ և Կարեագինի (Ջիբրայիլի) գաւառի ազգաբնակութեան կողմից։